

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ... ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Հայ ըլլալու է պատճառը, որ չես գիտեր ուրիշ ուր, անսպասելի պահու մը, անակնկալօրէն դէմը կը ներկայանայ Հայկական Յեղասպանութեան անդրադառնալու, այդ մասին բացատրութիւն տալու կամ վկայութիւն մը լսելու առիթը: Հաճելի պահեր են անոնք: Հոգեպէս կը սփոփուիս և մինչեւ որոնեմք զգացում մը, անելի ճիշդ տարբեր գոգացումներու խառնուրդ մը, որ սովորական բաներով դժուար է հարազատօրէն արտայայտել: Այդ գոգացումներուն զխառնում այն է, որ դուն, որպէս մէկ փոքրիկ մասնիկը թու ազգիդ, տեղ մը, կէտի մը վրայ, անակառ բոլորէն, կրցար փոքր նպաստ մը բերել ազգիդ ու անոր մեծ դատին: Այդ օրը հոգեպէս անելի հանգիստ կ'ըլլաս ու գործելու ճոր ետանդ մը կը ծնի մէջդ: Դուն թեզ քիչ մը անելի իմաստատրութեան կը գգաս:

Ստորեւ, "Արարատ"-ի ընթերցողներուն կը փոխանցեմ այդօրինակ պահերէն քանի մը հատը, որոնք անմիջականօրէն կայ ունին Օրում Առիթին հետ:

2006 թուականին, խորհրդարանական պատուիրակութեամբ մը, պաշտօնական այցով կը գտնուէի Պեղնիք: Ծագօթացանք մեզ հիւրընկալող երկրի Ծերակոյտի և Երեսփոխանական Ժողովի շարք մը անդամներուն հետ: Ընթերցի մը ընթացքին, կողքս նստող երեսփոխանը, երբ իմացաւ հայ ըլլալս, հետաքրքրուեցաւ Հայկական Յեղասպանութեամբ, լիբանանահայութեամբ, Հայաստանի և Արցախի իրավիճակով: Հայութեան մասին իր ցոյց տուած հետաքրքրութեան և ունեցած տեղեկութիւններուն հանդէպ զարմանքս յայտնեցի: Պատասխանեց թէ ինք հայասէր մըն է: Խօսակցութիւնը հասաւ հուն, ուր ան ըսաւ թէ որպէս երեսփոխանական ժողովի արտաքին լանձնախումբի անդամ, վերջերս մասնակցած է ՆԱԹՕ-ի անդամ երկրներու խորհրդարաններու համաժողովին, ուր Թուրքիոյ ներկայացուցիչները ժողովականներուն բաժնած են հակահայ բովանդակութեամբ գրքով մը: Ինք, կարդալէ ետք գրքովը, իրեն ծանօթ եւրոպացի երեսփոխաններուն բացատրած է գրքովին մէջ տեղ գտած տեսակէտներուն անճիմ ըլլալը: Ընթերցողիցի հիմք և փափաք յայտնեցի ունենալ այդ գրքովին: Խոստացաւ իր օրինակը տալ ինձի, խնդրելով որ, իրմէ ստացած ըլլալս չհրապարակեմ: Ան յարգեց իր խոստումը և յաջորդ օր, խորհրդարանի նախարարներէն մէկուն մէջ, առանձնացաւ հետս և պահարանի մը մէջ դրած գիրքը յանձնեց ինձի (Ես ալ յարգելով խոստումս իր անունը չեմ հրապարակել): Այս առիթով ան յանձնեց հետաքրքրութիւն ցոյց տուաւ Հայկական Յեղասպանութեան պատմական հանգամանքներուն շուրջ՝ որ բարարեցի մեծ սիրով: Երանի մեր խօսակցութիւնը անելի երկար տեւեր. մեր խումբը, աղոյճ դուրս եկած էր խորհրդարանէն, տեղաւորուած ինքնաշարժներուն մէջ և կը սպասէր ինձի մեկնելու համար յաջորդ ժամադրութեան: Մենք ակամայ բաժնուեցանք (Կողքի սինակով մեր ընթերցողներուն կը ներկայացնեմ "Հայկական Հարցը և Իրականութիւններ" վերնագիրը կողմ այդ գրքովը):

2005 թուականին, Երեսփոխան մէջ կը մասնակցէի Պատգամատրական Բարեկամութեան Հայկական Վեհաժողովին, որ անորում էր Հայաստանի Ազգային Ժողովի հիմնադրութեան 15-ամեակին: Վեհաժողովին կը մասնակցէին բազմաթիւ երկիրներէ ժամանած խորհրդարանական պատուիրակութիւններ: Հիւրանոցի նախամտերին, միջին տարիքով անձ մը մտնեցաւ ինձի և ոչ սահուն անգլերէնով ներկայացուց ինքզինքը. Քուլլո Արճաքաւ, Էսթոնիայի երեսփոխանական ժողովին անդամ: Ան փափաք յայտնեց գրուցել հետս. սիրով ընդառաջեցի: Հետաքրքրուեցաւ Հայկական Յեղասպանութեամբ և ընդհանրապէս սփիւռքահայութեամբ. կարելի եղած չափով բարարեցի զինքը: Այն հարցիս թէ ուրիշ՝ կու գայ Հայկական Յեղասպանութեան և սփիւռքահայութեան հանդէպ իր այս հետաքրքրութիւնը, պատասխանեց թէ այդ իր մէջ ծնած է երբ ծանօթացած է տիկ. Աննա Հէտիկ Պուլի կեանքին ու գործունէութեանը: Այդ անունն մասին իմ անտեղեկութիւնս յայտնեցի: Հակիրճ բացատրեց թէ ո՞վ է Հէտիկ Պուլ, խոստանալով որ, անոր մասին, իր յիշողութեան ասպակներով, կրնայ փոքր գրութիւն մը պատրաստել: Ընթերցողիցի եղաւ: Յաջորդ օր, հիւրանոցային խցիկին մէջ կար անգլերէն լեզուով գրութիւն մը Ղ. Պուլի մասին: Կողքի սինակով այդ գրութիւնը կը ներկայացնեմ մեր ընթերցողներուն, յուսալով որ այդ կ'ըլլալ անաւ յարգանքի ուղացած արտայայտութիւն մը հայասէր Էսթոնիայի յիշատակին:

1997-ին, երեսփոխանական պատուիրակ-

կութեամբ մը, պաշտօնական այցով գտնուեցաւ Ռումանիա: Պատուիրակութիւնը կը գլխավորէր խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրին: Մեր պաշտօնական ծրագիրը կը սկսէր խորհրդարան այցելութեամբ, անոր բաժնամուտներուն հետ ծանօթացմամբ և առաջին հանդիպումը՝ երեսփոխանական ժողովի մնայուն լանձնախումբերու նախագահներուն հետ: Այս հանդիպման ընթացքին ինձի մտնեցաւ և ինքզինքն ներկայացուց երիտասարդ երեսփոխան մը՝ Վարուժան Փամպուքեան, փոքրամասնութիւններու մնայուն լանձնախումբին նախագահ (Ռումանիոյ երեսփոխանական ժողովը կ'ընտրուի համեմատական դրութեամբ, որմէ դուրս, երկրին մէջ գտնուող 12 փոքրամասնութիւններէ իւրաքանչիւրը կ'ընտրէ իր ներկայացուցիչը, որ երեսփոխանի մը լիարժէք իրաւասութիւններով մաս կը կազմէ երեսփոխանական ժողովին: Փոքրամասնութիւններուն ներկայացուցիչները կը կազմեն փոքրամասնութիւններու լանձնախումբը, որուն նախագահութիւնը ամէն ամիս, հերթաբար կը ստանձնէ անոնցմէ մէկը: Մեր այցելութիւնը կը զուգարկալէր հայ ներկայացուցիչին նախագահութեան շրջանին: Ես և Վարուժան, ներկայներուն զարմացկոտ հայեացքներուն տակ, ջերմօրէն ողջագոյրուեցանք... կարծես շա՛տ հին ծանօթներ ըլլալիմք: Անմիջապէս Նեպիի Պըրրին բացատրեցի այս ողջագոյրման պատճառը: "Եղբայր, հայերը այսպէս են, միշտ իրար սիրող ու յարգող" - կատակեց ան: "Երանի քսածը միշտ ճիշդ ըլլար" - պատասխանեցի միտքէս: Յաջորդ օրերուն Վարուժանը պատուիրակութեան "պոչը չձգեց": Կ'ընկերանար մեզի ամենուր և ցոյց կու տար արտակարգ հոգատարութիւն: Այցելութեան վերջին օրը, հայ գործակերտ պատմեց թէ իրեն մտնեցած է հրեայ փոքրամասնութեան ներկայացուցիչը և դժգոհութիւն յայտնած լիբանանեան պատուիրակութեան հանդէպ իր ցոյց տուած ուշադրութեան (Մեր այցելութեան նախորդ օրը Լիբանանի հարաւին մէջ տեղի ունեցած էր Սարաֆանտի դէպքը, ուր զոհ գացած էին 12 իսրայէլացի զինուորներ և Լիբանան- Իսրայէլ յարաբերութիւնը

խիստ լարուած էր): Հրեայ երեսփոխանը Վարուժանին կ'ըսէ, որ եթէ նոյնիսկ հայ ծագումով երեսփոխան մը կայ պատուիրակութեան մէջ, ապա, այս հոգատարութիւնը Լիբանանի պատուիրակութեան հանդէպ դարձեալ չարդարանար: Վարուժան կը պատասխանէ թէ իր յարգանքը լիբանանեան պատուիրակութեան հանդէպ, անոր կազմին մէջ հայազգի երեսփոխանի մը ներկայութեամբ պայմանաւորուած չէ: Աշխարհի բոլոր հայերը, Հայաստանէն ետք իրենց երկրորդ հայրենիքը կ'ընդունին Լիբանանը և ինք ինչպէս ռեալ հայ, մեծ սէր ունի այդ երկրին հանդէպ: Վարուժանին այս պատասխանը մեծապէս գոհացուց զիս և ես հարցուցի թէ այս երկխօսութիւնը կրնա՞յ անել Նեպիի Պըրրին պատմել: Անպատեհութիւն մը չգտա: Նեպիի Պըրրին մէկ ազատ պահում մտնեցայ իրեն և ըսի թէ հայ երեսփոխանը կը փափաքի շատ կարճ տեսակցութիւն մը ունենալ հետը և ըսելիք մը ունի: Սիրով ընդառաջեց: Վարուժան Փամպուքեան վերոյիշեալ երկխօսութիւնը նոյնութեամբ պատմեց Նեպիի Պըրրին: Նեպիի Պըրրին գոհունակութիւնը ակներեւ էր (վերադարձի ճամբուն վրայ, օդանաւին մէջ, ան այս խօսակցութիւնը պատմեց պատուիրակութեան միւս անդամներուն): Պըրրի հետաքրքրուեցաւ ուսմանահարցութեամբ: Իրեն համար նորութիւն էր որ հայ գաղութը կազմուած չէ նախկին լիբանանահայերէ, այլ այդ կազմուած է նոյնիսկ Մեծ Եղեռնէն առաջ, Թուրքիայէն արտագաղթած հայերէ: Սա պատճառ եղաւ որ խօսակցութիւնը ընթանայ դէպի Յեղասպանութիւն, հայութեան վիճակը Օսմանեան Կայսրութեան մէջ նախքան Յեղասպանութիւնը, եւայլն: Վարուժանը մէկ կողմէ, ես միւս կողմէ կը բարարեմք Նեպիի Պըրրին հարցերուն: "Կարճ պահո՞ւ" մը համար նախատեսուած համոզմունք տեսնեց բաւական երկար: Երբ դուրս եկանք Պըրրին առանձնասենեակէն, ես թեթեւութիւն մը կը զգայի: Վստահ եմ որ նոյնը կը զգար անաւ Վարուժան, որովհետեւ սկսած էր աստիճաններէն երկու-երկու իջնել...:

ՏՈՔԹ. ԵՂԻԿ ԸՆԴՐԷՄԵԱՆ

ՀԵՏԱԳՐՔՐԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅ ՄԸ, ԵՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԼԻԲԱՆԱՆԸ ԵՒ ԷՍԹՈՆԻԱՆ ԿԸ ՄԻԱՆԱՆ

Տիկ. Աննա Հէտիկ Պուլը ծնած է Էսթոնիոյ Հելսինկի քաղաքին մէջ, 1887-ին: Ան ուսուցչուհի էր և շատ աստուածավախ: 1909-ին, ան կարգ մը թերթերու մէջ կը կարդայ հայութեան հանդէպ եղած սարսափներուն մասին (հաւանաբար խօսքը կը վերաբերի Ատանայի Աղէտին. - Ե. Ծ.): 1911-ին Հէտիկ Պուլ աշխատանքի կը սկսի Կիլիկիոյ Մարաշ (Գերմանիկէ) քաղաքին մէջ: Հոն, իրենց ծնողները կորսնցուցած հայ փոքրիկներուն համար կար տուն մը: Այն կը կոչուէր "BEITEL", ուր անաւ կ'աշխատէին Գերմանիայէն եկած կամուտներ. (տիկ. Պուլ կը գործակցի գերմանացի պատուէրի Մոնթէի, տիկ. Սոմարաչի, զովիցերիացի տիկ. Պիպերիս Թոմերի և այլոց հետ): Որոշ շրջան մը տիկ. Թոմեր և տիկ. Պուլ կ'աշխատին Հալէպի մէջ: 1916-էն սկսեալ տիկ. Պուլ կ'աշխատի Կիլիկիոյ մէջ (Մարաշէն հարաւ փոքր գիւղ մը), ուր կար որբանոց մը գեղասպանութեան ժամանակ իրենց ծնողները կորսնցուցած հարիւրաւոր և հազարաւոր հայ փոքրիկներուն համար:

1918-ին ֆրանսական զօրքերը կը գրաւեն Կիլիկիան և գերմանացի կամուտներուն կեանքը կը դառնայ հարցական, որովհետեւ այդ ժամանակ Ֆրանսան և Գերմանիան Համաշխարհային Ա. Պատերազմի մէջ էին: Սակայն, ֆրանսացիները կ'երաշխատէին, որ տիկ. Պուլ շարունակէ իր գործունէութիւնը:

1921-էն Հէտիկ Պուլը Սուրիոյ մէջ կ'աշխատի ֆրանսական "Արեւելի Բրիտանական Ծարժում" կազմակերպութեան մէջ: Ան օգտակար կը դառնայ հայերուն մինչեւ 1951 թուականը և 64 տարեկանին կը մեկնի Եւրոպա: Ան փափաք կը յայտնէ հաստատուիլ խորհրդային Հայաստան: Սակայն, խորհրդային իշխանութիւնները չեն արտօներ: Հէտիկ Պուլ կը մահանայ 1981-ին, Արեւմտեան Գերմանիոյ մէջ:

ՔՈՒԼԼՕ ԱՐՃԱՔԱՍ (Էսթոնիոյ խորհրդարանի անդամ)

Երեսան, 2005 Նոյեմբեր

Kyllo Arjakas +372 50 28161

kyllo.arjakas@niigikogu.ee

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ»

Գրքովը բաղկացած է 55 էջերէ և կազմուած է երկու մաս: Առաջին մասը քառալեզու (անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, թրքերէն) բովանդակութիւնն է, իսկ երկրորդ մասը, բովանդակութեան հետ առնչուող 17 փաստաթղթեր են: Գիրքին հեղինակն է Տիարայեքիի երեսփոխան փրոֆ. Ազիզ Աքկիլ. անոր հրատարակիչներն են Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովն ու Թափօններու Յարթահարման Թըրքական Հիմնադրամը: Գիրքը հասցէագրուած է ՆԱԹՕ-ի անդամ երկիրներու խորհրդարաններու 2006 Մայիս 26-30-ին կայացած գարնանային նստաշրջանին (Հեղինակը գիրքի հրատարակման համար իր շնորհակալութիւնը կը յայտնէ Թուրք Պատմաբաններու Ընկերակցութեան նախագահ փրոֆ. Եուսուֆ Հալաճօղլուին և փոխնախագահ՝ փրոֆ. Հիքմէթ Լօզտէմիրին):



Գրքովին մէջ տեղ գտած սխալները, թերիներն ու հակասութիւնները կարելի է բաժնել երկու մասի: Առաջին մասը՝ կը բնի պատմական հանրայայտ իրողութիւններու անտեղեկութեան և կամ պատմական փաստերու հանդէպ յարգանքի պակասէն: Այս կարգի սխալներէն կարելի է ճշել. - Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան թուականն է 1881, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան թուականն է 1889, Պօղոս Նուպար Փաշա ունի գորակարի կոչում, Յովհաննէս Ալլահիվերտի անունով հայը եղած է երեսփոխանական ժողովի փոխ նախագահ՝ սկսած օսմանեան առաջին խորհրդարանէն մինչեւ 1915:

Այս կարգի պարզունակ և անիմաստ սխալները կ'ամբողջանան դիտարկեալ և նպատակաւայաց խելաթփրումներով, որոնց նպատակն է "փաստել" որ հայերու պղծած գեղասպանութիւնը անհիմն է:

Հեղինակը, նախ քանի մը պարբերութիւններու մէջ կը փորձէ ցոյց տալ, որ հայերն ու թուրքերը 850 տարի իրար հետ ապրած են շատ խաղաղ: Ապա, յաջորդող չորս էջերուն մէջ, անոր զիտար նպատակը կ'ըլլայ ցոյց տալ որ 1915 թուականի հայերու բռնագաղթը կարելի չէ գեղասպանութիւն անուանել: Այստեղ, Ա. Աքկիլի անպարտութիւնը յստակ է: Ան ոչ մէկ խօսք կ'ընէ զանգուածային ջարդերուն, հրկիզումներուն, մտաւորականներու ձերբակալութեան, հայ բանակայիններու զինաթափման և սպանութեան, որոնց հանրագումարն է որ կը կազմէ գեղասպանութիւնը: Ան միայն կ'անդրադառնայ բռնագաղթին և նոյնիսկ պատեղ, ան կ'իյնայ հակասութիւններու մէջ:

Հատ հեղինակին "աքտորուած հայերը դրկուեցան Սուրիա, որ օսմանեան տարածք էր և կը գտնուէր պատերազմի ծիրէն ներս: Այս աքտորի համար, Օսմանեան Կայսրութեան նպատակը նախագոյնական և ապահովական էր": Այս պարբերութեամբ, հեղինակը յստակօրէն կ'ընդունի որ բռնագաղթը ունէր պետականօրէն կազմակերպուած բնոյթ: Միանշեղ, քանի մը տող անդին ան կը գրէ. "1915 թուականի օսմանեան պետական պիտանէին մէջ ոչ մէկ յատկացում կը ճշմարտի (բռնագաղթի կազմակերպման համար. - Ե. Ծ.): Սա ցոյց կու տայ որ 1915-ին և անկէ առաջ հայերու դէմ բռնագաղթի որեւէ ծրագիր չէ եղած": Այս պարբերութեամբ ալ, հեղինակը ամբողջապէս կը ծխտէ բռնագաղթին պետականօրէն ծրագրուած ըլլալը:

Հեղինակը կը գտնէ, որ ամբողջ հայութիւնը չէ որ բռնագաղթի ենթարկուեցաւ, այլ՝ "մաս մը միայն": Ապա, կը պնդէ, որ 1919-1921-ի միջոցին 350 հազար հայերու "արտօնուեցաւ" վերադառնալ Անատոլիա: Եթէ ընդունինք, որ բռնագաղթած "մաս մը հայերը", առաւելագոյնը ընդհանուր հայութեան կէսն էր, և դարձեալ ընդունինք որ անոնք բոլորն ալ, անխտիր ետ վերադարձան, ապա 1921-ի դրութեամբ 1921-ին Անատոլիոյ հայութեան թիւ 700,000 պէտք է ըլլայ, որ 85 տարի ետք, բնական աճով, պէտք է անցնի 1 միլիոնի սահմանը: Ո՞ր է այդ հայութիւնը Անատոլիոյ մէջ...:

"Հայկական Հարցը և Իրականութիւններ" գրքովը կարելի է ընդունիլ որպէս թրքական հակահայ քարոզչութեան դասական մէկ ընթացակարգ:

Ե. Ծ.